

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 9-ին, երկուշաբթի օրը, ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում հոգևոր ճեմարանի 1974—1975 ուսումնական տարվա հանդիսավոր բացումը, որին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը՝ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի գլխավորությամբ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունն ու այլ հրավիրյալներ:

Հանդիսությունն սկսվում է «Հայր մեր»-ով: Հոգևոր ճեմարանի դասախոս տ. Եզնիկ աբդ. Պետրոսյանն ընթերցում է «Սերմնացանի առակ»-ը ս. Ավետարանից: Ս. լսարանի ուսանող Հակոբ Գլնճյանն ընթերցում է Նարեկից (բան ԼԴ) ս. Հոգուն ուղղված աղոթք-աղերսը: Հոգևոր ճեմարանի ուսանողները երգում են «Աշակերտք Քրիստոսի» և «Որք զարդարեցին» շարականները:

Խոսք է առնում հոգևոր ճեմարանի նախկին տեսուչ տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը, որը հովվական պաշտոնի է կոչվելու: Հոգեշնորհ հայր սուրբը հրաժեշտի իր խոսքն է ասում հոգևոր ճեմարանի դասախոսական կազմին և ուսանողությանը՝ արտահայտելով իր լավագույն տպավորությունները հոգևոր ճեմարանից, անցած երկու տարիների ընթացքում:

Այնուհետև խոսք է առնում հոգևոր ճեմարանի տեսչի պաշտոնն ստանձնած տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը, երախտագիտություն է հայտնում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ իր նկատմամբ ցույց տրված բարձր վստահության համար, և հավատացնում բոլոր ներկաներին՝ խղճի մտոք և նվիրումով կատարելու իրեն հանձնված պատասխանատու աշխատանքը:

Այնուհետև, մասնավորաբար հոգևոր ճեմարանի ուսանողությանն ուղղված, օրհնության խոսք է ասում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Խանդավառ մթնոլորտում ողջ ներկաները հոտնկայս երգում են «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը:

Հանդեսն ավարտվում է Տերունական աղոթքով:

Այս տարի հոգևոր ճեմարանի տեսչության և դասախոսական կազմի մեջ տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները. նոր պաշտոնի կոչվելով, տեսչի պարտականություններից ազատվել է տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը: Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ տեսչի պաշտոնը հանձնվել է տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանին: Հոգևոր ճեմարանի վերակացու է նշանակվել Նորայր սրկ. Ավագյանը: Տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանին և տ. Աղան վրդ. Բալիոզյանին ուսուցչական ասպարեզում փոխարինել են տ. Հմայակ եպիսկ. Ինդոյանը և տ. Եզնիկ աբդ. Պետրոսյանը:

Սեպտեմբերի 10-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 9.30-ին, հնչում են ուսումնական նոր՝ առաջին զանգերը և սկսվում դասախոսությունները: